ՋԱՎԱԽՔ

50. ԱՆԹԻՈՒ ԱՇԽԱՐՔ ԷՐԹՅՈՂ ՏՂԱՆ

Գըլլի կը չի ըլլի, մե թագավորմ գըլլի։ Ադիկ կունենա կը իրեք տղա։ Տղաքն օր հասնին կը, թագավորը կըսե կը, թե՝ էկեք ղայոդ-ներդ ցկեք, ում դուտն օր ընկավ, անոր աղջիկը առնենք ձեզի։

Գուքան ցկեն կը, մենծինը գըյնի կը մե հարըստիմ, միջնակի-նը՝ մե իշխընիմ դուռ, ատոնց աղջիկները կառնեն։ Պզտըկինը կէր-թա ծովին ղրաղը մե գորտիմ փոր խրի կը։

Տղան կէրթա տեսնի կը գորտը, կըսե.— Հըլպտ իմ բախտս ա աս էր։

Վերցնե դնե կը յազլուխիմ մեջ, բերե կը հորը։

Հարը հորսոտի կը վրան ու գուզե օր տղին գլխատել տա. իշ-խընները, մարը մեջ գըյնին, թագավորին հերսը գիջեցնեն։ Տղան աղաչե կը, թե գորտը մե օթախմ ցկեն, էրթա մնա։ Տանին մե մուն-տառ օթախմ ցկեն կը վար։ Տղան մեկալ օրը գուքա, օր գորտը տես-նի, սիրտը քաշե կը, չի համբիրե, տեսնի կ'օր ան մունտառ օթախը հայլի է դառե, գորտն ա մե քոշամ քուշուրեր է։ Կառնե անմեն ինչ խառնե կը իրար ու գելլե դուս, դռան ետևը պահ մտնի կը, ծակեն կաշե։ Մեմա տեսնի կ'օր գորտը վրայեն փոստը ցկեց ու էրկնային լուս աղջիկմ դառավ։ Անոր շավխեն մութ պատերը լուս տվին։ Հըմը, ջանմսան տղա, դուռը բանա ու վազե գրկե ադոր, աղիկ շաշմիշ գլլի, օր փախչի էրթա փոստն հագնի, տղան անորեն առաջ խլե կը փոստն

ու ցրկէ կը թնդիր, վառէ կը։ Արթըղ գլլին մարթ ու կնիկ, իրար հետ սիրով ապրին կը։

Մէ օրմ թագավորը տեսնի կ'օր իրեն ղոնախանին մէ շավխըմ է դիպե։ Մարդ ղրկէ կ'օր իմանան, թէ ադ ինչեն է։ Կէրթան, գուքան թէ.— Ղոնախանին դեմը մէ աղջիկըմ է կայնե, անպես աղջիկմ օր սաղ աշխարքին մեջը անգրտնվելիք, լուսն էրեսեն կաթէ կը. ադ շավխը անորեն է դիպե։

Թագավորը դուս գելլե տեսնի կը ադ աղջկան, խելքը գլխեն կէրթա, սիրտը խմե կը, հըմը ինչ էնես օր իրեն հարսն է։ Օրըմ, էրկուս՝ ադիկ ալ զավթ չի ըլլի, միտքը դնե կ'օր տղին գլոխը աղե ու ադոր ինքը առնե։

Կանչե կը տղին, կըսե,—Դու պիտի էրթաս ընձի անպես չադրըմ բերես, օր սաղ ղոշունս տակը հավքի, թէ չէ՝ գլոխդ կոռել կուտամ։

Տզան հասկնա կը բանը, մոլորը գըյնի շանը։ Խեղճ ու սեֆիլ գուքա տուն, օ սահաթ կնիկը դեմ կը վազզե, փաթթվի կը վիզը, հարցընե կը թե՝ ընչի՞ է տխրե։ Ան ա բան չի պահե, կըսե կը թե, թագավորը իրմեն անպես չադրըմ ուզեց, օր ղոշունը մեջը հավքի։

— Աման,— կըսե կնիկը,— Ադ ա բան է՞ ու, քընը խանում մարիկիս ըսե թէ. «Աղջիկդ ձեր պզտի չադրբը ուզեց»—ատ տար իրեն։—Ասիկ կէրթա ծովին քյանարը, կանչե կը խանում մարիկին։ Մէ խանում խաթուն կնիկըմ գելլե դուս։ Ասիկ կըսե կը թե.— Ձեր աղջիկը ձեր պզտի չադրբը ուզեց։

— Լա՛վ,— կըսե Կնիկը։

Սըկի կը ջրին տակն ու մեմ ա գելլե երեսը, մէ ղոճա չադրըմ կուտա փեսին։ Փեսան շնորհակալ գըլլի, ուրախ ուրախ կառնե, տանի կը թագավորին։ Թառավորը չադրբը զարնել կուտա, սաղ ղոշունը մեջը թոփ գըլլի, կեսն ա բաց կը մնա։ Թագավորը մաթ մնա կը։ Նորեն կանչե կը քովը, կըսե թե.— Պտի թեզըմ էրթաս, կակլի մեծուբյան մառջանմ բերես, թե չէ՝ գլոխդ կոռել կուտամ։

Ասիկ կենա խեղճ ու սեֆիլ գուքա կը տուն, կնիկը դիմանա, կենա մորը քովը ղրկե կը։

Փեսան կէրթա ծովին քյանարը, կանչե կը ղոնքնչին դուս, աղաչե կ'օր մէ հատըմ կակլի մեծուբյան մառջանմ տա։ Ան ա կըսե կը թե.— Ասպես գընը, մէ դեմ ռաստ գուքա, իմ կողմես ըսե անոր, կուտա կը։

Ասիկ ցըցուցած ճամփով կէրթա կը, մէ ղոճա դեմ ռաստ գուքա, կըսե,— Խանում մարիկն ըսաց օր ինձի կակլի մեծուբյան մեմ մառջանըմ տաս։

— Լավ,— կըսե դևը,— քալե կնկանս քովը տամ։

Քիչըմ կէրթան, տեսնին կ՚օր մե ուրիշ դևմ է նստե, մե ծիծը ցկերը է մե ուսը, մեկալը՝ մեկալ ուսը, փութմ ա ղուրղուշուն ցկեր է բերանը չթրր-չթըր ծամե կը։ Աս դևը քաշե կը թուրն ու կնկանը գլոխը կտրե կը. կտրիլը դիմանա՝ արունը կակլի մեծության մառ-ջան կտրած թափլե կը։

— Դե,— կըսե դևը,— ժողվե ինչքան գուզես։

Ասիկ ծոցն ու ջեբերը լըլե կը, կըսե. «Հերիք է, ալ տեղ չունիմ»։

Աս վախտը դևը ծոցեն հանե կը յափրաղմ ու քսե կը կնկանը գլխուն, կնիկը օ սահաթ սաղնա կ՚ու ծամե կը ձութը։ Տղան ուրախ-ուրախ դուքա, քանիմ մառջան կուտա կը թագավորին։ Թագավորը դհա կատղի կը, կանչե, կըսե կը թե.

— Մարդ օր մեռավ խաղնին բալնեստանը հետը տարավ, պի-տի էրթաս բերես, թե չէ՝ սաղ տեղդ անկաչդ թողնիմ կը։

Տղան կենա կէրթա ծովին քյանարը, խանում մարիկին կան-չե կը դուս, կաղաչե օր իրեն մեկալ աշխարքը ղրկե, էրթա մորեն խաղ(ն)ին բանլինքը բերե։ Խանում մարիկը դուս հանե կը կարմիր, ճերմակ, մեմա սև ձիմ, լողացնե, չփե կը, ետև ա հարցընե կը, թե վե՞րը կրնա ադ տղին անթիու աշխարքը տանի՝ ետ բերե։

Ճերմակը կըսե կը թե.— Ես տանիմ բերեմ կը։

Տղան նստի կը ձիուն, ձին կըսե.— Աչքերդ խփե ու բաց։

Խփե ու բանա կը, տեսնի կ՚օր գետնին տակը մե մութ տե-ղըմ են։ Քիչըմ առաջ կէրթա տեսնի կ՚օր, մե հարսմ տեյմոր բուկը ջրի մեջ խրված մայլամիշ գըլլի թե՝ ծառավ մեռա։

Կէրթա քովը, կըսե,— Ադ ինչե՞ն է օր տեյմոր բուկդ ջուրն ես խրե ու պուտմ ջուր չես կընը խմե։

Անա թե.— Մեմ դու առաջ ըսե ո՞ւր կէրթաս։

— Կէրթամ օր մորես խաղնին բանլինքը առնիմ տանիմ։

— Լավ,— կըսե,— անտեղ գնացողը ետ չի դառնա, մակար ետ դառցար՝ կըսեմ։ Հըմը տեսնիմ կ՚օր մեղք ես, ա՛ռ իսի էրկու խըն-ձորը, դռնեն օր նես պիտի մտնիս, էրկու կողքը ասլանմ ու ղափ-լանմ են կապած, մեկը տո՛ւ մեկին, մեկալը մեկալին՝ նես մտի։

Ադիկ կ՚առնե խնձորները, կէրթա։ Կէրթա, տեսնի կ՚օր մե կա-ջում վրա մարթ ու կնիկ նստել ծեծկվին կը։ Մոտենա կըսե կը թե.— Ախր ՚ի՞նչ եք էրե օր ծեծկվիք կը։

— Թե գընը էկե, ետ էկար, կըսենք կը։

Ասիկ ալի առաջ կէրթա, տեսնի կը կնիկմ մե ձեռքը կրակի մեջ, օխտը ունկանի պղինձը վրան։ Ասոր ա հարցընե կը, թե.—Ինչի՞

ձեռքդ կրակը դրեր վառես կը,— ան ա ալի ան կըսե կը թե.

— Անտեղ էրթըցողը ետ չի գա, թե ետ էկար, կըսեմ։

Քիչմ'ա առաջ կէրթա, տեսնի կ'օր մե ալաղ-ափում, էրկու կուզ-տը մե ասլանմ ու ղափլանմ են կայնե, հանե առաջի հարսի տված մե խնձորը մեկին կուտա, մեկալը մեկալին, ադոնք ետ քաշվին կը. ադիկ դուռը բանա, մտնի կը նես։ Օ սրհաթ անմահական հոտը բու-րե կը, տեսնի կը մորը լուս կոռած, անթառական ծաղիկ բոլորը բուսած։ Կէրթա մորը ձեռքը պագնե, կըսե կը թե.— Հարըս խազ-նին բանլինքը գուզե կը։

Մարը լցվի կը, գուլա,— Խազնին բանլինքը իրեն քովն է,—կը-սը,— անիկ միտքը դրեր է, օր քեզի սրպանե։ Առ իսի յափրաղը, գընը, ֆենդովմ բալքի գլոխդ ազատես։

Ասիկա գուլա, կենա կը փաթթվի, լուսիմ պես ձեռքեն գելլե, դառնա կը ետ, գուքա ան կնկանը քովը, օր ձեռքը կրակին մեջ դրեր, վառեր կը։

Անիկ զարմանա կը, կըսե.— Աֆֆարըմ տղա, ինսընի չէրթցած տեղը դու գնացիր։

— Չէ.— կըսե ասիկ,— ղուն ան ըսե թե, աս ինչի՞ ձեռքդ կը վառես։

— Մեղքս ինչ պահեմ,— կըսե կնիկը,— անթիու աչխարքն օր խաբ կէնեինք, կաթին մեջ վիրահա ջուր խառնեի կը, հիմի ան է քա-շեմ կը։

Ասիկ կանցնի, կէրթա մեկալին քովը, ալի անպես հարց ու փորձ կէնե, անոնք ա կըսեն կը թե.— Անթիու աչխարքը էրկուսիս աչքն ա դուսն էր, սիրուն հարսմ ըլլիր՝ ես կը սիրեի, սիրուն մարդմ ըլլիր, ան կը սիրեր, հիմի ես ասոր կը ծեծեմ, թե մեղքը քուկդ է, ան ա ինձի կը ծեծե, թե քուկդ է, թող դու ուրիշի չըսիրեիր, օր ես ա չսիրեի։

Կանցնի կէրթա առջինին քովը, անա կըսե կը թե.— Արտըվո-րին օր ջուր տանեի կը, ծառավ ճամփորթիմ ջուր չտվի, հիմի ես ծառավ պապակիմ կը։

Տղան կանցնի, ձին կըսե.— Աչքդ խփե ու բաց։

Խփե կու բանա կը, տեսնի կը իրենց դռան առաջն է։ Գիշնի, ձին բաց կը թողնե, կէրթա նես։ Կէրթա նես, փաթթվի կը կնկանն գուլա թե.— Հարըս ինձի սրպանել գուզե, բանլինքը իրեն քովն է։

— Ախ,— կըսե կնիկը,— դուն օր իմ փոստս թնդիր չցկեիր, ես հիմի քեզի ազատել էի։

Տղան հանվի կ'օր քնի, տեսնի կ'օր ծոցեն բանմ ընկավ, վեր-

ցընե կ'օր՝ բանլինք։ Մի՛ սե, մորը տված յափրաղը բանլինքն է դառցե։ Ուրախնա կը, մութե մութանց տանի կուտա կը հորը։

Հարը տեսնի կ'օր աս անգամ ա պըրծավ էկավ, կըսե.— Պտի էրթաս անպես մե մեյմունմ բերես, օր ինքը ըլի մե թիզմ, միրուքը օխտը թիզ։

Կէրթա ալի ծովին քյանարը, խանում մարիկին կաղաչե, կառնե մե մեյմունմ, գուքա։ Գուքա օր թագավորը ղոշունը կը խաղցընե, տանի կը կուտա։

Թագավորը կըսե,— Դե՛, մեմ թող խաղա, տեսնիմ՝ շնորհքը։

Մեյմունն օր սաղ զորքին առաջը չի՛ խաղա, ետև գուքա թագավորի առաջ կայնի կ'ու կըսե— Թագավորն ապրաստ կենա, հարն օր որդուն աշխատի սըպանե, անոր ի՞նչ պատիժ պիտի տրվի։

Թագավորը կարմըրի կը, հըմը ի՞նչ պիտի էնէ, սաղ ղոշունը իրեն կաշե։

— Ինչ օր գուզես,— կըսե։

— Թող քար կռռի,— կըսե մեյմունը։

Օ սահաթ թագավորը քար կռռի կը։

Ղոշունն օր ադ հրաշքը տեսնի կը, ճվա կը թե.— Տղին թագավոր գուզենք։

Արթըղ աղ տղան կնկանը կառնե, թագավոր նստի կը։

Անոնք հասան իրենց մուրազին, դուք ա հասնիք ձեր մուրազին։